ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2022 թվականի N 966

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 151 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՒՐԵՆ ՀԱՄԱՅԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Համայակի Գրիգորյանի 06.12.2022 թվականի թիվ 16692 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1719846 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 27.07.2022թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի 3865 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20220728-84-6122520) ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 151 ա հասցեում գտնվող, Սուրեն Համայակի Գրիգորյանի սեփականության իրավունքով պատկանող 0.01788 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 151 ա հասցեում գտնվող, Սուրեն Համայակի Գրիգորյանի սեփականության իրավունքով պատկանող շինության օգտագործման նպատակը՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություն՝ խորդանոց:

3. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

4. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 151 ա հասցեում գտնվող ջերմային կայանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 151/7 խորդանոց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 26
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 դեկտեմբերի 2022 թվականի N 967

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱՐԵՆ ԳՈՌ ԱՋԱՄՅԱՆԻ ԵՎ ՄԱԴԼԵՆԱ ԳՈՌ ԱՋԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոնա Խաչիկի Բաղրամյանի և Ալիսա Վարդանի Սահակյանի դիմումը՝ երեխաների նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022թ. նոյեմբերի 16-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 11, կետ 1), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչ փողոցի թիվ 35 շենքի 30 բնակարանի բնակիչ Ալիսա Վարդանի Սահակյանին (ծնված՝ 06.10.1965թ., անձնագիր՝ AS 0482402, տրված՝ 14.01.2019թ., 066-ի կողմից, հաշվառման հասցեն՝ք.Վանաձոր, Ծատուրյան փողոց, թիվ 13 տուն) նշանակել թոռների՝ Արեն Գոռ Աջամյանի (ծնված՝ 31.07.2017թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 562434, տրված՝ 03.08.2017թ., Սպիտակ ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) և Մադլենա Գոռ Աջամյանի (ծնված՝ 07.12.2014թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 381788, տրված՝ 09.12.2014թ., Սպիտակ ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից) նկատմամբ խնամակալ մինչև 31.12.2023թ.:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 26
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2022 թվականի N 968

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ,ԳՈՒԳԱՐՔԻ, ԴԱՐՊԱՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5 կետով՝ ***որոշում եմ***.

ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Արարատ Աթոյանին, Գուգարքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկանուշ Սարգսյանին, Դարպասի համայնքապետարանի թվով 5 աշխատակիցներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ յուրաքանչյուրի հաստիքային դրույքաչափին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2022 թվականի N 969

ՍՈՒՐԻԿ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Վարդանանց 80/2 հասցեի բնակիչ Գևորգ Վասիլյանի դիմումի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 29 ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Վարդանանց 80/2 հասցեի բնակիչ Գևորգ Վասիլյանը դիմումով հայտնել է որ հանդիսանում է Վարդանանց 80/2 հասցեի բնակիչ և նույն հասցեում իր սեփականություն հանդիսացող բնակելի առտանձնատան հարևանությամբ գործող «Նորմեդ» բժշկական սեփականատերը սկսել է իրականացնել արևային վահանակների տեղադրման աշխատանքներ: Այն վայրում,որտեղ նախատեսում է տեղադրել արևային վահանակները սահմանափակում է իր առանձնատան բնական լույսը,ինչի արդյունքում առաջանում է բարձր խոնավության ռիսկ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.11.2022 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 24 հասցում «Նորմեդ» բժշկական կլինիկայի տանիքում ինքնակամ կառուցվել է արևային վահանակներ:

2022 թվականի նոյեմբերի 29-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականի դեկտեմբերիի 06-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ներկայացել է Գևորգ Վասիլյանը: «Նորմեդ» բժշկականական կենտրոնի սեփականատեր Սուրիկ Ալթունյանը պատշաճ ծանուցվել և չի ներկայացել վարչական վարույթի լումներին հիմք՝ստացական LO106852061AM:

2022 թվականի դեկտեմբերի 06-ին տեղի ունեցած վարչկան վարույթի լսումների ընթացքում Գևորգ Վասիլյանը հայտնել է «Նորմեդ» բժշկական կենտրոնի տանիքին տեղադրված արևային

վահանակները չեն համապատասխանում ճարտարապետական նորմերին սահմանափակում է իր առանձատան բնական լույսը ինչի արդյունքում առաջանում է բարձր խոնավություն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սուրիկ Ալթունյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Առաջարկել Սուրիկ Ալթունյանին՝ Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի թիվ 24 հասցեում «Նորմեդ» բժշկական կլինիկայի տանիքում ինքնակամ կառուցված արևային վահանակները ապամոնտաժել և բերել նախկին տեսքի:

3. Սուրիկ Ալթունյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 970

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Վլադիմիրի Մանուկյանի 13.12.2022 թվականի թիվ 17208 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1455346 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/68524/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 49 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 49/7 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 971

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 122 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱՐԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Յուրիկի Ասատրյանի (ծնված՝ 21.03.1974թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 18.10.2022թ. տրված հայտարարությունները, 23.12.2022թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-271/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.12.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022YXMCXZ), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 122 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 349.9քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1995թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 349.9քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1995թ.-ից: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Նարինե Յուրիկի Ասատրյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 122 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 349.9քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 122 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Երևանյան խճուղի, թիվ 122/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 972

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ՓԱԿՈՒՂԻ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տարոն Արթուրի Առաքելյանի 23.12.2022 թվականի թիվ 17988 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01072015-06-0033 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/70128/, 23.12.2022 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5909 պայմանագիրը (նոտարական կոդ; 843-20221223-2-6556232), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Լազյան փողոց փակուղի 7 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 7/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 973

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 8/1 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Սարգսի Իսրայելյանի (ծնված՝ 01.09.1958թ.) լիազորված անձ Ռուզաննա Մարտունի Իսրաելյանի դիմումը, 20.05.2022թ. տրված թիվ 2742 (նոտարական ակտի կոդ: 763-20220520-90-5921294) լիազորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 30.06.2022թ. տրված թիվ 2857 (նոտարական ակտի կոդ: 741-20220630-88-6039006) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 06.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-61/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտե 24.05.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022UDO1BN), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 2-րդ նրբանցք, թիվ 8/1 հասցեի հյուսիսային մասում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 67.6քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1978-1990թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 67.6քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վահագն Սարգսի Իսրայելյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 2-րդ նրբանցք, թիվ 8/1 հասցեի հյուսիսային մասում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 67.6քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 2-րդ նրբանցք, թիվ 8/1 հասցեի հյուսիսային մասում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 67.6քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 2-րդ նրբանցք, 29 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 974

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ, 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱԿ ՅՈՒՐԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 610 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Յուրիկի Հարությունյանի լիազորված անձ Լիլիթ Սեյրանի Զարգարյանի և Արմինե Արարատի Հարությունյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11112021-06-0011 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, եզրակացությունը, 04 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 6327 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 594-20221004-90-6322396), ՀՀ կադաստրի կոմիտեի 30.11.2022 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-30112022-06-0124 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր Համայնքի գյուղ Գուգարք 13-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող, Արտակ Յուրիկի Հարությունյանին և Արմինե Արարատի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր Համայնքի գյուղ Գուգարք 13-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.05629հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր գյուղ Գուգարք 13-րդ փողոց թիվ 19/1 հողամաս (հատակագիծ թիվ 1).

բ) 0.04437հա մակերեսով հողամասի և նրա վրա գտնվող 91.50քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր գյուղ Գուգարք 13-րդ փողոց թիվ 19 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2).

գ) 0.01284հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր գյուղ Գուգարք 13-րդ փողոց թիվ 19/2 հողամաս (հատակագիծ թիվ 3).

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 11 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք, 13-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող, Արտակ Յուրիկի Հարությունյանին և Արմինե Արարատի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և հողամասը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 610 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 975

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍ ԹԻՎ 6/8 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԳԻԿ ԲԱՐՍԵՂԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 663 ԵՎ 25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 840 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Բարսեղի Արզումանյանի (ծնված՝ 26.09.1958թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.06.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022UXMUZI), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 12.08.2022թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-100/22 Ի եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի տեղեկանքը, Լոռու մարզի Դարպաս համայնքի տրված 13.12.2022թ. տեղեկանքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի գյուղ Դարպաս թիվ 6/8 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 601.3քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 601.3քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2010թ. օգոստոսի 12-ի թիվ 1004-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշման 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Վանաձոր քաղաքի գյուղ Դարպաս թիվ 6/8 (պայմանական) հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.06013հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի և Լոռու մարզի Դարպաս համայնքի տրված 13.12.2022թ. տեղեկանքի:
2. Ճանաչել Գագիկ Բարսեղի Արզումանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի գյուղ Դարպաս թիվ 6/8 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 601.3քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի ճշտված սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր, գյուղ Դարպաս, 2-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 41 բնակելի տուն:
5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 17 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի գյուղ Դարպաս թիվ 6/8 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տան ու հողամասի նկատմամբ Գագիկ Բարսեղի Արզումանյաի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 663 որոշումը:
6. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 25 նոյեմբերի 2022 թվականի «Վանաձոր համայլքի ղեկավարի 17 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 663 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 840 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 976

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ ՓՈՂՈՑ (ՆԱԽԿԻՆ ԿԱԼԻՆԻՆԻ) ԹԻՎ 27 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ ՊԱՊՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Աշոտի Պապոյանի (ծնված՝ 23.05.1970թ.) լիազորված անձ Հասմիկ Աշոտի Քոչինյանի դիմումը, 10.03.2022թ. տրված թիվ 1198 (նոտարական ակտի կոդ: 594-20220310-90-5749362) լիազորագիրը, 16.03.1993թ. և 19.11.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 22.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-112/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 01.12.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022UG6FZX), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 28.11.2022թ. գրությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց (նախկին Կալինինի) թիվ 27 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 152.5քմ և կից 44.965քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1985թթ.-ին: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 235.1քմ, որից 75.27քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ Գևորգ Աշոտի Պապոյանի և Միշա Սիսակի Պապոյանի միջև: Գևորգ Աշոտի Պապոյանի բաժնեմասը կազմում է 197,465քմ (159,83+75.27:2):Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1985թթ.-ին: Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 197,465քմ (159,83+75.27:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գևորգ Աշոտի Պապոյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց (նախկին Կալինինի) թիվ 27 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 152.5.0քմ մակերեսով հողամասին կից 44.965քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 235.1քմ, որից 75.27քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ Գևորգ Աշոտի Պապոյանի և Միշա Սիսակի Պապոյանի միջև: Գևորգ Աշոտի Պապոյանի բաժնեմասը կազմում է 197,465քմ (159,83+75.27:2):

2. Ճանաչել Գևորգ Աշոտի Պապոյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց (նախկին Կալինինի) թիվ 27 հասցեի 197,465քմ (159,83+75.27:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Ֆիդայիների փողոց (նախկին Կալինինի) թիվ 27 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ֆիդայիների փողոց, 27/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 977

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԻՄԱ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՄՈՍԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռիմա Պատվականի Մոսինյանի (ծնված՝ 10.12.1940թ.) դիմումը, 13.03.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 08.04.2022թ-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1209 (նոտարական ակտի կոդ: 741-20220402-84-5802186) և սեփականության իրավունքի թիվ 1208 (նոտարական ակտի կոդ: 741-20220402-84-5802187) վկայագրերը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 02.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-81/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Լազյան թիվ 40 հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինաան 101.3քմ մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1946-2005թթ.,դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 101.3քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1946թ.-ից: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ռիմա Պատվականի Մոսինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան թիվ 40 հասցեի 101.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 15.05.2001թ-ից հետո կառուցված 2.8քմ մակերեսով բնակելի տնից:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Լազյան թիվ 40 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Լազյան փողոց, 40/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2022 թվականի N 978

ԱՐԱՅԻԿ ՓԻԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Ք. Վանաձոր Տիգրան Մեծի 34/50 հասցեի բնակիչ Գևորգ Գևորգյանի դիմումի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

2022 թվականի նոյեմբերի 23-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2022 թվականինոյեմբերի 30-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել են Գևորգ Գևորգյանը (հիմք՝ ստացական՝LO106756418AM) և Արայիկ Փիլոյանը (հիմք՝ ստացական LO106756610AM) :

Տեղի ունեցած վարչական վարույթի լսումների ընթացքում Գևորգ Գևորգյանը և Արայիկ Փիլոյանը հայտնեցին որ որևէ պահանջ կամ բողոք չունեն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. 23.11.2022 թվականին Արայիկ Փիլոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել՝ վարչական իավախախտման հիմքի բացակայության պատճառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2022 թվականի N 979

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահ Միեր Համլետի Աբրահամյանի լիազորված անձ՝ Աշոտ Մարտիրոսի Խոջայանի 27.12.2022 թվականի թիվ 18173 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1853833 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/70762/, 01.10.1991թվականի բանկային գործունեության թիվ 9 լիցենզիան, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի 01.10.1991թ. թիվ 0177 գրանցման վկայականը,31.05.2018 թվականի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 91Ա որոշումը, 10.05.2022 թվականի թիվ Ե-5-656 լիազորագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 4 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք.,Մ. Խորենացու փողոց, 4/1 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր